ՔՆԱՐԻԿ ՌՈԲԵՐՏԻ ԱՎԱԳՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 26.04.1968
Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու **Քնարիկ Ռոբերտի Ավագյանը** ծնվել է մտավորականների ընտանիքում:

1985 թ. «Ոսկե մեդալով» ավարտել է Երևանի Եղ. Չարենցի անվան № 67 անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը:

1985-1990 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետում՝ մասնագիտանալով Ընդհանուր պատմության ասպարեզում:

1991-1994 թթ. ուսումնառությունը շարունակել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում՝ պատրաստելով ԱՄՆ-ի հայ գաղութի պատմությանը նվիրված դիսերտացիոն աշխատանք, որը պաշտպանել է 1995 թ.՝ ստանալով ***պատմական գիտությունների թեկնածուի*** գիտական աստիճան:

1995 թվականից նախ որպես ավագ լաբորանտ, կրտսեր գիտաշխատող (1995-1996 թթ.), գիտաշխատող (1996-1998 թթ.), ավագ գիտաշխատող (1998-2015 թթ.), առաջատար գիտաշխատող (2015-2024 թթ.), իսկ 2025 թ. մինչև օրս որպես ավագ գիտաշխատող աշխատում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնում:

1998-2001, 2003 և 2006 թթ. որպես ավագ գիտական խմբագիր աշխատակցել է նաև Հայկական հանրագիտարանի խմբագրության Պատմության բաժնին:

1991 թվականից Համաշխարհային, Հայոց, ապա՝ Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմություն է դասավանդել տարբեր ԲՈՒՀ-երում, իսկ 2007 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային

կենտրոնի մագիստրատուրայի Պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնում:

Ք. Ավագյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ԱՄՆ-ի հայ համայնքի, Հայ սփյուռքի, Հայրենադարձության, Հայոց և ԱՄՆ-ի, ինչպես նաև Համաշխարհային պատմությունը, Քաղաքագիտությունն ու Հասարակագիտությունը:

Ք. Ավագյանը հեղինակ է ***«Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.)»*** (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 240 էջ) մենագրության:

Նա հեղինակ է նաև պատմագիտական տարբեր հատորներում և հանրագիտարաններում լույս տեսած ծավալուն հոդվածների ու բաժինների, այդ թվում՝ *«Ամերիկայի Միացյալ Նահանգներ»* (Հայ Սփյուռք Հանրագիտարան, Երևան, 2003, էջ 33-85), *«Ամերիկայի Միացյալ Նահանգներ»* (Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 3, Երևան, 2013), *«Եգիպտոս»* (Հայոց պատմություն, հ. II, հ. III, Երևան, 2014, 2015), *«Ամերիկայի Միացյալ Նահանգներ»* (Հայոց պատմություն, հ. III, Երևան, 2015), ինչպես նաև՝ շուրջ 150 գիտական հոդվածների, որոնք հայերեն և օտար (ռուսերեն, անգլերեն) լեզուներով տպագրվել են Հայաստանում և արտերկրում: Դրանցից 1-ն ընդգրկված է **Scopus** (2024) ՄԳՇ-ում:

Խմբագրել է շուրջ երկու տասնյակից ավելի գիտական հրապարակումներ, աշխատություններ, ժողովածուներ:

Ք. Ավագյանը զեկուցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, այդ թվում՝ Նյու Յորքի Կոլումբիա (ԱՄՆ, 2004), Լայպցիգի (Գերմանիա, 2007), Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական (Ռուսաստանի Դաշնություն, 2016), Կահիրեի (Եգիպտոս, 2016) համալսարաններում, ինչպես նաև Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտում (Ռուսաստանի Դաշնություն, 2025) և այլուր:

Հանրային դասախոսություններով հանդես է գալիս Հայաստանի և սփյուռքի հեռուստատեսությամբ, ռադիոյով ու մամուլով, մասնագիտական կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, սփյուռքահայ համայնքներում, ինչպես նաև ՀՀ ու ԱՀ զինվորականության և ուսանողության համար:

Արժանացել է ՀՀ ԳԱԱ Նախագահության և «Գալուստ Կյուլպենկյան» հիմնադրամի սահմանած ***«Լավագույն Ասպիրանտ և***

Երիտասարդ Գիտնական-2001» մրցանակին, ՀՀ ԳԱԱ Նախագահության № 1 ***«Պատվոգրին»*** (2003), Հայոց փիլիսոփայական ակադեմիայի ***«Երամեծ Փիլիսոփա Դավիթ Անհաղթ»*** հուշամեդալին ու դիպլոմին (2011), ՀՀ ԳԱԱ Նախագահության ***«Պատվոգրին»*** և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ***«Գովեստագրերին»*** (2013), ՀՀ սփյուռքի նախարարության ***«Պատվոգրին»***, Գիտական հետազոտողների համառուսաստանյան ընկերություն ***«Երախտագրին»*** (ՌԴ, 2024), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ***«Վաստակագրին»*** (2026) և այլն:

Անկուսակցական է: